ԽԱԼԻՖԱ ԻԲՆ ԽԱՅՅԱԹ
(776/777 – 854/855)

Խալիֆա իբն Խայյաթ ալ-Ուսֆուրին, որը հայտնի է նաև Շարար անվամբ, ծնվել է 776 կամ 777 թվականին Բասրայում (Իրաք): Նրա հայրը և պապը ուսումնասիրել են ավանդությունները (Հադիս) Մուհամմադի կյանքի մասին: Խալիֆան ուսումնառությունն անց է կացրել Բասրայում, ուր նրա ուսուցիչներն են եղել Հիշամ ալ-Քալբին, ալ-Մաղուինին և ուրիշներ, իսկ նրա աշակերտներից կարելի է հիշատակել Բուխարիին (որն իր կրոնական աշխատության մեջ հիշում է նրան) և Իբն Հանբալին: Խալիֆան մահացել է հիջրի 240 (854/855) թվականին, թեև որոշ մատենագիրներ այլ թվականներ են նշում: Ըստ որոշակի տվյալների նա ապրել է 80 տարի:

Խալիֆա իբն Խայյաթը հայտնի էր որպես «Կենսագրությունների գրասկարգում» (Թարակատ) աշխատության հեղինակ: Հայտնի էր, որ նա գրել էր նաև պատմական մի երկ, որը սակայն կորած էր համարվում: Սակայն 1963 թվականին Մարոկկոյի մի հեռավոր մենաստանում, հայտնաբերվեց մի ձեռագիր, որը ինչպես պարզեց Բաղդադի համալսարանի իսլամի պատմության դասախոս, բանասեր Աբրամ Դիա ալ-Օմարին, Խալիֆա իբն Խայյաթի կորած համարվող պատմական երկն է, որը նա հրատարակեց 1967 թվականին Բաղդադում: Այս հայտնագործությունը մի բացառիկ երևույթ էր արաբագիտության մեջ, քանզի աշխատությունը ամբողջովին պահպանված հնագույն արաբական պատմական երկն է:

Նրա պատմական երկը մեզ է հասել եզակի ձեռագրով, որը Ռաբատի մատենադարանում 199 թվահամարն է կրում: Ունի 336 էջ և գրված է մաղրիբյան հստակ գրությամբ: Որոշ տեղերում ձեռագիրը խոնավությունից տուժել է և ինչ-որ բառեր չեն կարդացվում: Գրչագրի վերջում կա ընդօրինակողի անունը՝ Ահմադ իբն Մուհամմադ ալ-Աշտարի և թվականը՝ հիջրի 477 (1085): Այս պատմական երկը մեզ է հասել Բակիլ իբն Մախլադի (817-889) խմբագրությամբ, որը Խալիֆայի աշակերտն էր Իրաքում:

Հեղինակն իր այս գիրքն սկսում է սահմանելով՝ թե ինչ բան է Պատմությունը, ապա անդրադառնալով Մուհամմադ մարգարեի ծնունդին, անցնում է հիջրային (դաղթը Մեքքայից Մադինա 622-ին) դանց առնելով Մուհամմադի կյանքի մեքքայական շրջանը, որից հետո շարադրում է պատմությունը ընդհուպ մինչև 846 թվականը: Պատմիչը հատուկ ուշադրություն է դարձրել Օմայան խալիֆայությանը և Արաբական խալիֆայության արտաքին նվաճումներին:

Ներկա թարգմանությունը կատարված է 1977 թվականի Բեյրութ-Դամասկոսյան հրատարակությունից՝ Tarikh Khalitah ibn Khayyat, Beyrouth-Damas, 1977.

(Խալիֆա իբն Խայյաթը որպես Հայաստանի և Խալիֆաության էթ դդ. պատմության աղբյուր: - Արևելյան աղբյուրագիտություն. 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1988, էջ 134-150. կամ Ա. Տեր-Ղևոնդյան. Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 643-659, Ibn Khayyat al-Usfuri, Khalifa, S. Zakkar, EOI, CD-ROM, (III: 838b)):

Տե՛ս նաև.

- The History of Khalifah ibn Khayyat, v. 1-2, ed. By Akram D. al-Umari, 1967 (Baghdad).